

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի Հանրապետության կառավարության՝

### «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին

Ուսումնասիրության հիմքը՝ « վերահսկիչ պալատի մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքները, ՀՀ վերահսկիչ պալատի 2010 թվականի տարեկան ծրագիրը:

Ուսումնասիրության նպատակը՝ «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ուսումնասիրության օբյեկտները՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, գանձապետական համակարգ:

Ուսումնասիրության ժամանակահատվածը՝ 01.05.2010թ.-ից մինչև 20.05.2010թ.-ը:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝ «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվություն, «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» (այսուհետ՝ Օրենք), «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներ, 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի թիվ 218-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և ՀՀ պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1573-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1573-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորությունների ստանձնման գործընթացը կանոնակարգելու և մի շարք այլ հարցերի մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 48 որոշում, բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներ, ինչպես նաև այլ իրավական ակտեր:

### 2009 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Համաձայն ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2009 թվականի

պետական բյուջեի եկամուտները «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել է 905,400,595.0 հազ. դրամ: 2009 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 20,495,995.3 հազ. դրամով, և արդյունքում՝ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 925,896,590.3 հազ. դրամ:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 18 կետի, արտաբյուջետային միջոցների որոշ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները ներառվում են ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվում են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր: Հաշվետվությունում ՀՀ 2009 թվականի պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվներում մուտքերը տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշվով նախատեսվել էր 28,120,146.5 հազ. դրամ, ճշտված ծրագրով կազմել է 29,610,905.9 հազ. դրամ, որից՝ 17,656,857.6 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում ստացվող եկամուտներն են, 11,953,456.5 հազ. դրամը արտաբյուջետային միջոցների՝ դիտարկվող ժամանակահատվածի սկզբի ազատ մնացորդը, իսկ 591.80 հազ. դրամը ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են: Արտաբյուջետային միջոցների հաշիվներում փաստացի մուտքը կազմել է 30,759,856.5 հազ. դրամի գումար, որից՝ 16,792,074.1 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն են, 13,962,054.5 հազ. դրամը՝ արտաբյուջետային միջոցների՝ դիտարկվող ժամանակահատվածի սկզբի ազատ մնացորդը, իսկ 5,727.8 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտներն, առանց արտաբյուջետային միջոցների, փաստացի կազմել է 673,203,027.3 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային միջոցների) նկատմամբ՝ 74.1%, իսկ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտները, ներառյալ՝ արտաբյուջետային միջոցները, փաստացի կազմել է 689,995,101.4 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 76.2%-ը, ճշտված ծրագրի՝ 74.5%-ը: 2009 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՆԱ-ի (3,165,538,100.0 հազ. դրամ) նկատմամբ կազմել են 21.8% (2008թ.՝ 21.5%):

Օրենքով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել է 945,449,770.0 հազ. դրամ, 2009 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 47,026,847.6 հազ. դրամով, և դրա արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը (ներառյալ՝ 19,960,407.6 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվող ծախսը) կազմել է 992,476,617.6 հազ. դրամ, իսկ ծախսերի ճշտված ծրագիրը (առանց արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվող ծախսի) կազմել է 972,516,210.0 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 15,463,586.6 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 929,108,613.2 հազ. դրամ կամ Օրենքով

նախատեսվածի 98.3%-ը, ճշտված ծրագրի՝ 93.6%-ը: 2009 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 29.4% (2008թ.՝ 22.2%):

Օրենքով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի պակասուրդը հաստատվել է 40,049,175.0 հազ. դրամ, որը տարվա ընթացքում ավելացել է 26,530,852.3 հազ. դրամով, այսինքն՝ ճշտված ծրագիրը կազմել է 66,580,027.3 հազար դրամ: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 239,113,511.8 հազ. դրամի պակասուրդ, որը Օրենքով նախատեսվածից ավելի է 6 անգամ, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ նախատեսվածից 3.6 անգամ: ՀՆԱ-ի նկատմամբ 2009 թվականի պակասուրդը կազմում է 7.6% (2008թ՝ 0.7%):

2002-2009 թվականների ՀՀ պետական բյուջեների մասին ՀՀ Օրենքներում կատարված վերլուծության արդյունքում առկա է ՀՀ կառավարությանը փոխանցած լիազորությունների ընդլայնում, որի արդյունքում 2009 թվականի ՀՀ կառավարությանը լրացուցիչ եկամուտների և ներգրավված միջոցների առկայության դեպքում իրականացնել լրացուցիչ ծախսերի բաշխում:

### **2009 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ**

2009 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 689,995,101.4 հազ. դրամ (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները), սակայն 2009 թվականին բյուջեի փաստացի եկամուտները 2008 թվականի համեմատ նվազել են 95,359,930.4 հազ. դրամով կամ 12.1%-ով, իսկ առանց արտաբյուջետային եկամուտների, նվազումը կկազմի 82,505,978.7 հազ. դրամ կամ 10.9%: 2009 թվականի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի փաստացի եկամուտների հարաբերակցությունը, ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները, կազմել է 21.8 %, 2008 թվականի 21.5 %-ի փոխարեն, այսինքն՝ ավելի է 0.3 % տոկոսային կետով:

Ըստ Հաշվետվության, 2009 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքում, հարկային եկամուտները կազմել են 72.9%, առանց արտաբյուջետային հաշիվների եկամուտների՝ 74.6%, պետական տուրքերը՝ համապատասխանաբար՝ 2.8% և 2.8%, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ համապատասխանաբար՝ 14.9% և 15.3%, պաշտոնական տրանսֆերտները՝ համապատասխանաբար՝ 3.1 % և 3.2% և այլ եկամուտները՝ համապատասխանաբար՝ 6.2 % և 4.2 %:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները) Օրենքով նախատեսված 703,709,000.0 հազ. դրամից պակաս է մուտքագրվել 200,382,478.4 հազ. դրամով կամ 28.5%-ով, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 503,326,521.6 հազ. դրամ՝ ապահովելով ճշտված տարեկան ծրագրի 71.3% կատարում: Իսկ առանց արտաբյուջետային եկամուտների

2009 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 501,844,116.5 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 71.31%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 71.27%: 2009 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 15.9%, նախորդ տարվա 16.4%-ի համեմատ:

2009 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 19,033,451.5 հազ. դրամի պետական տուրք, որը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 79.3%, իսկ Օրենքով հաստատվածի նկատմամբ՝ 80.2%: 2009 թվականին պետական տուրքը կազմել է փաստացի եկամուտների 2.8%-ը:

2009 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները Օրենքով նախատեսվել են 128,412,476.5 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 25,509,385.9 հազ. դրամով պակաս և կազմել է 102,903,090.6 հազ. դրամ, կամ կատարվել է 80.1%-ով: 2009 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են փաստացի եկամուտների 14.9%-ը:

2009 թվականին պետական բյուջեի պաշտոնական տրանսֆերտները Օրենքով նախատեսվել են 34,712,798.5 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 37,209,533.4 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 21,699,645.7 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի 62.5%-ը, ճշտված ծրագրի 58.3%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի պաշտոնական տրանսֆերտները կազմել են 21,187,850.2 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 61%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 57.7%: 2009 թվականին պաշտոնական տրանսֆերտները կազմել են փաստացի եկամուտների 3.1%-ը:

2009 թվականին պետական բյուջեի այլ եկամուտները Օրենքով նախատեսվել են 14,821,320.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 30,276,280.6 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 43,032,392.0 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի 290.3%-ը, ճշտված ծրագրի 142.1%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի այլ եկամուտները կազմել են 28,234,518.5 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 190.5%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 187.9%: 2009 թվականին այլ եկամուտները կազմել է փաստացի եկամուտների 6.2%-ը:

Հաշվետվությունում բացակայում է ըստ եկամտատեսակների ճշտված պլանին և կատարողականին վերաբերող տվյալները, որը հնարավորություն չի ընձեռում հիմնավոր վերլուծություն իրականացնելու համար: Վերահսկիչ պալատի կարծիքով, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում նախատեսել

եկամուտները՝ ըստ եկամտատեսակների, մասնավորապես՝ հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների:

2009 թվականի ընթացքում, ՌԴ-ի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի միջոցների հաշվին բյուջետային վարկերի տրամադրումը տնտեսավարող սուբյեկտներին կազմել է 97,603,099.0 հազ. դրամ, որից՝

- ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև 2009 թվականի հուլիսի 8-ին կնքված Ֆինանսական գործակալության պայմանագրի համաձայն 2009 թվականի հուլիսի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի հիմնարկ հանդիսացող «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակին տրամադրվել է 60,500,000.0 հազ. դրամ: Ըստ պայմանագրի փաստացի օրական մնացորդի դիմաց յուրաքանչյուր կիսամյակային ժամանակահատվածում Կենտրոնական բանկը կառավարությանը պետք է վճարի տոկոսներ՝ հաշվի կրեդիտագրման օրվանից մինչև 2009 թվականի դեկտեմբերի 15-ը ներառող փաստացի ժամանակահատվածի համար՝ 5.16375 դրույքաչափով, որը կազմում է 1,360,895.7 հազ. դրամ, սակայն ՀՀ կենտրոնական բանկը փոխանցել է 1,176,501.2 հազ. դրամ, կամ 184,394.5 հազ. դրամով պակաս, որի արդյունքում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները 184,394.5 հազ. դրամով պակաս են հավաքագրվել:
- «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև 2009 թվականի հուլիսի 29-ին կնքված պայմանագրի յուրաքանչյուր կիսամյակային ժամանակահատվածում «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն կառավարությանը պետք է վճարի տոկոսագումար, մասնավորապես՝ մինչև 2009 թվականի դեկտեմբերի 15-ը ներառող փաստացի ժամանակահատվածի համար՝ 9.16375 տոկոսադրույքով, որը կազմում է 50,076.6 հազ. դրամ, սակայն «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ը փոխանցել է 47,532.9 հազ. դրամ կամ 2,543.7 հազ. դրամով պակաս, որի արդյունքում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները 2,543.7 հազ. դրամով պակաս են հավաքագրվել:

Խախտվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի թիվ 48 որոշման 68 կետը, ըստ որի՝ «Գանձապետական ծախսային հաշիվների և ԲՄԿ - ների դրամարկղերում առկա մնացորդը բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին փոխանցվում են հաջորդ տարվա բյուջեի ազատ մնացորդի գանձապետական եկամտային հաշվին»: Վերլուծությունը ցույց է տվել, որ 2009 թվականին գանձապետական ծախսային հաշիվների և ԲՄԿ - ների դրամարկղերում առկա մնացորդը՝ 1,811,031.6 հազ. դրամը (որից՝ 450,901.98 հազ. դրամ գանձապետական ծախսային հաշիվների և ԲՄԿ - ների դրամարկղերում առկա մնացորդն է 30.12.2008թ.

դրությամբ, իսկ 1,360,129.6 հազ. դրամը՝ 31.12.2009թ. դրությամբ), բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին չի փոխանցվել ազատ մնացորդի գանձապետական եկամտային 900005055059 հաշվին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 21-րդ գլխի 332-րդ հոդվածի համաձայն հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, ելնելով վերոնշյալից, առաջարկում ենք ապահովել ՀՀ պետական բյուջեի և արտաբյուջեի չպարզաբանված գումարների հաշիվների հաշվառում, և ժամկետանց գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջեի համապատասխան եկամտային հաշվին: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ արտաբյուջեի չպարզաբանված հաշիվներից 32,613.8 հազար դրամ ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջեի համապատասխան եկամտային հաշվին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.02.09 թվականի թիվ 179-Ա և 02.04.09թ. թիվ 336-Ա «Պետական բյուջեից բյուջետային վարկ տրամադրելու մասին» որոշումները 2009 թվականի մարտի 11-ին և ապրիլի 17-ին ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի միջև կնքվել է թիվ 2/2009 և թիվ 3/2009 պայմանագրերը, համաձայն դրանց՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին 28.04.09 թվականին տրամադրվել է 125,000,000.0 ՀՀ դրամ և 20.04.09 թվականին՝ 559,000,000.0 ՀՀ դրամ բյուջետային վարկեր՝ տարեկան 0.001 տոկոս դրույքաչափով: 2009 թվականի հուլիսի 8-ին ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի միջև կնքվել է թիվ 6/2009 պայմանագիրը, համաձայն որի «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին տրամադրվել է 10.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, գումարով բյուջետային վարկ տարեկան 6M USD LIBOR+4 տոկոս դրույքաչափով կամ 5.16375 դրույքաչափով:

ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 11-ի թիվ 656-Ն որոշմամբ սահմանվել է, որ վերոնշյալ որոշումներով հատկացված գումարների ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում Հայաստանի Հանրապետությանը Ռուսաստանի Դաշնության կողմից 2009 թվականին հատկացված պետական վարկը (որը Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 6M USD LIBOR+3 տոկոս դրույքաչափով): Որոշումով փոխվել է ֆինանսավորման աղբյուրը, սակայն պայմանագրում չի փոխվել բյուջետային վարկերի տարեկան 0.001 տոկոսադրույքի չափը, թողնվել է նույնը, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է ընդամենը 7.0 հազ. դրամ: Մեր կարծիքով, եթե ֆինանսավորման աղբյուրի փոփոխության հետ փոխվեր բյուջետային վարկի 0.001 տոկոսադրույքի չափը 5.16375-ով (ինչպես 2009 թվականի հուլիսի 8-ին ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի

միջև կնքվել է թիվ 6/2009 պայմանագրերում), ապա ՀՀ պետական բյուջե կմուտքագրվել 10,741.2 հազ. դրամ: Բացի այդ, պայմանագրում բացակայում է վարկի մարման ժամկետը:

2009 թվականի ընթացքում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունները ֆինանսական գործունեության արդյունքում ստացած զուտ շահույթից շահութաբաժիններ են վճարել 520,070.1 հազ. դրամի, նախատեսված 375,000.0 հազ. դրամի դիմաց:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ներկայումս ՀՀ պետական ռեզիստրում գրանցված է պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող թվով 1023 ընկերություններ, որից՝ 849-ը դրանք՝ 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերություններն են, իսկ 174-ը՝ մինչև 50 տոկոսը: Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների ֆինանսական գործունեության արդյունքում ստացած զուտ շահույթից շահութաբաժիններ վճարելու գործընթացի վերահսկողությունը դրված է ՀՀ ֆինանսների նախարարության վրա: Պետք է նշել, որ ներկայումս 849-ից վերահսկողության դաշտում է գտնվում պետության սեփականություն հանդիսացող 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցող 447 ընկերություններ, իսկ մինչև 50 տոկոսը պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունները իրենց ֆինանսական գործունեության արդյունքում ստացած զուտ շահույթից շահութաբաժիններ ընդհանրապես չեն վճարում և վերահսկողության դաշտից դուրս են գտնվում: Այսինքն՝ վերահսկողությունից դուրս են մնում ընդամենը թվով 576 ընկերություններ (174-ը մինչև 50 տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերությունները և 402-ը՝ 50 և ավելի տոկոս), որոնք շահույթ ստանալու դեպքում պետք է զուտ շահույթից շահութաբաժիններ վճարեին: Առաջարկվում է միջոցառումներ մշակել այդ 576 ընկերություններին գործընթացում ընդգրկելու համար, որը հնարավորություն կտա ՀՀ պետական բյուջե լրացուցիչ եկամուտներ մուտքագրելու:

### **2009 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ**

Ըստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 15,463,586.6 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 929,108,613.2 հազ. դրամ, որը Օրենքով նախատեսվածի 98.3%-ը, ճշտված ծրագրի՝ 93.6%-ն է:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ծրագրերի (գործառնական դասակարգմամբ) կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. թվով յոթանասուն Օրենքով նախատեսված ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը ճշտված ծրագրերով նախատեսվել է՝ 5,883,007.1 հազ. դրամ, չի կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել:

2. թվով քսանհինը ծախսային ծրագրերով փաստացի ծախսեր՝ 71,351,151.9 հազ. դրամ, ճշտված ծրագրով նախատեսվածից ավելի ծախս է կատարվել՝ 29,050,289.6 հազ. դրամի չափով:
3. թվով վաթսույն ծախսային ծրագրերով (այդ թվում՝ 17-ը արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են) փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր (ներառված չեն չկատարված ծրագրերը): Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 25,984,357.4 հազ. դրամ, մինչդեռ փաստացի կատարողականը կազմել է 6,472,176.6 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 24.9%-ը: Պետք է նշել, որ այդ ծրագրերում գումարային արտահայտությամբ փաստացի ցուցանիշի ամենամեծ բացասական շեղումը ճշտված ծրագրի նկատմամբ արձանագրվել է «ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային և «Բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» ծրագրերում՝ -8,869,222.7 հազ. դրամ ընդհանուր արժեքով (04050108 ծրագրով՝ -6,832,063.0 հազ. դրամ և 10060102 ծրագրով՝ -2,037,159.7 հազ. դրամ):
4. 2009 թվականի ընթացքում նախատեսված 349,759.3 հազ. դրամ գումարի չափով չորս ծախսային ծրագրեր տարեկան ծրագրի ճշտման արդյունքում զրոյացվել են:
5. թվով քսանյոթ ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն ճշտված ծրագրով նախատեսվել են 32,803,519.6 հազ. դրամ (առանց արտաբյուջեի), իսկ փաստացի կատարվել են 31,775,208.9 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 96.9%-ով: Այդ քսանյոթ ծրագրերից ինը դրամաշնորհային ծրագրեր են, որոնց փաստացի ծախսը կազմել է 1,079,103.5 հազ. դրամ և ինը վարկային ծրագրեր են՝ 29,217,792.9 հազ. դրամ փաստացի ծախսով:
6. 2009 թվականի ընթացքում կատարված ծախսերի կառուցվածքը հետևյալն է՝ սոցիալական պաշտպանություն՝ 26.2%, տնտեսական հարաբերություններ՝ 14.4%, պաշտպանություն 14.0%, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին՝ 12.2%, կրթություն՝ 11.6%, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 7.5%, առողջապահություն՝ 6.0%, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ 2.3%, հանգիստ, մշակույթ և կրոն՝ 1.8%, շրջակա միջավայրի պահպանություն՝ 0.4%, հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 3.7%:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը տասը բաժիններում նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է



«Շրջակա միջավայրի պաշտպանություն» բաժնում՝ 62.4%, իսկ գերակատարվել է միայն տնտեսական հարաբերություններ բաժինը՝ 101.9%, իսկ ծրագրերից ամենացածր՝ 0.4% կատարողական է արձանագրվել Արտադրանքի որակի փորձաքննության ծառայություններ ծրագրում:

Ըստ Հաշվետվության, ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (ներառյալ՝ արտաբյուջետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) կառուցվածքը տնտեսագիտական դասակարգմամբ հետևյալն է. 77.3%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, 22.7%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն են:

2008 թվականի համեմատ, 2009 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 14.6%-ով:

2009 թվականին ընթացիկ ծախսերը Օրենքով նախատեսվել է 770,779,100.6 հազ. դրամ, որը բյուջետային տարվա ընթացքում նվազել է 1.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է 14.2%-ով «Այլ ծախսեր» հոդվածի նվազմամբ: 2009 թվականին փաստացի ընթացիկ ծախսերը կազմել է 718,349,865.99 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կատարվել են 93.2%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 94.6%-ով: 2009 թվականին ընթացիկ ծախսերի հիմնականում բոլոր հոդվածներով արձանագրվել է նախատեսվածից ցածր կատարողական:

2009 թվականին պետական բյուջեից 19,026,565.4 հազ. դրամը տրամադրվել է սուբսիդիաներին, որից 17,766,819.2 հազ. դրամը կամ 93.4%-ը պետական կազմակերպություններին տրամադրված սուբսիդիաներն են, իսկ 1,259,746.2 հազ. դրամը կամ 6.62%-ը՝ ոչ պետական կազմակերպություններին տրամադրված սուբսիդիաները:

Հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել են 80,080,753.0 հազ. դրամի դրամաշնորհներ, որից՝ 946,168.6 հազ. դրամը միջազգային կազմակերպություններին, 71,610,172.0 հազ. դրամը կամ 89.4%-ը հատկացվել են ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին և 7,524,412.5 հազ. դրամի կապիտալ դրամաշնորհները պետական հատվածի այլ մակարդակներին:

Ընթացիկ դրամաշնորհներից՝ 27,491,019.5 հազ. դրամն ուղղվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներին, 17,478,383.1 հազ. դրամը՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, իսկ այլ ընթացիկ դրամաշնորհները կազմել է՝ 20,304,655.5 հազ. դրամ:

2009 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերի 25.9%-ը կամ 240,178,818.1 հազ. դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները:

«Այլ ծախսեր» հոդվածով հատկացվել է՝ 134,858,375.7 հազ. դրամ, որից՝ 97.8%-ը կամ 131,863,262.6 հազ. դրամը այլ ծախսերի «այլ ծախսերն» են:

2009 թվականին «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հոդվածով ծախսերը Օրենքով նախատեսվել է 174,670,669.4 հազ. դրամ, որը բյուջետային տարվա ընթացքում ավելացվել է 58,347,516.6 հազ. դրամով կամ 33.4%-ով, ճշտված ծրագրով կազմել է 233,018,185.97 հազ. դրամ և փաստը կազմել է 210,758,747.2 հազ. դրամ: Բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և դրանց օտարումից մուտքերը ավելացվել են համապատասխանաբար՝ 58,727,094.4 հազ. դրամով և 379,577.8 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը համապատասխանաբար կազմել է՝ 246,716,173.8 հազ. դրամ և 13,697,987.8 հազ. դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով փաստացի ծախսերը և դրանց օտարումից մուտքերը համապատասխանաբար կազմել են՝ 221,408,830.1 հազ. դրամ և 10,650,082.9 հազ. դրամ:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կատարվել է 77.8%-ով:

ՀՀ 2009 թվականին պետական բյուջեի ծախսերի (գերատեսչական դասակարգմամբ) վերլուծությունը ցույց տվեց, որ ընդամենը փաստացի ծախսերից 58.1%-ը բաժին է ընկնում վեց նախարարությունների: Դրանք են՝

1. ՀՀ 2009 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 20.1%-ը բաժին է ընկնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 190,838,581.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով 190,630,795.4 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 187,032,845.9 հազ. դրամի չափով կամ ճշտված ցուցանիշի 98.1%-ը: 2009 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2008 թվականի համեմատ աճել է 12.5%-ով:

2. ՀՀ 2009 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 13.96%-ը բաժին է ընկնում ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների օգտագործմանը՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 148,989,338.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 135,165,846.1 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 129,737,483.6 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 95.98%-ը: Դժուր ծրագրի նկատմամբ նախատեսվածից ցածր կատարողականը պայմանավորված է «Ռ-ազմական կարիքների բավարարում» ծրագրի թերակատարմամբ՝ 5,320,000.7 հազ. դրամով: 2009 թվականին ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2008 թվականի համեմատ աճել է 1.7%-ով:

3. 2009 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ծախսը պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 6.9%-ն է, որը Օրենքով նախատեսվել է 75,655,225.7 հազ. դրամ,

ճշտված ծրագրով՝ 73,100,273.3 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության փաստացի ծախսերը կազմում են 64,368,414.7 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 85.1%-ը, ճշտված ծրագրի 88.1%-ը:

4. 2009 թվականին գերատեսչություններից փաստացի ընդամենը ծախսերի 6.0%-ը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը: Այդ գերատեսչությանը հատկացված միջոցների օգտագործման համար Օրենքով նախատեսվել է հատկացնել 64,571,539.6 հազ. դրամ, ճշտված ծրագրով 62,727,889.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը կատարվել է 56,048,509.1 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 89.4%-ը: 2009 թվականին ՀՀ առողջապահության նախարարության փաստացի ծախսերը 2008 թվականի համեմատ աճել է 12.8%-ով:

5. 2009 թվականին գերատեսչություններից փաստացի ընդամենը ծախսերի 5.6%-ը բաժին է ընկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների օգտագործմանը՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 53,359,156.8 հազ. դրամ, ճշտված ծրագրով 53,089,333.7 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 51,855,070.0 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 97.7%-ը: 2009 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2008 թվականի համեմատ աճել է 28.4%-ով:

6. 2009 թվականին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ծախսը պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 5.5%-ն է, որը Օրենքով նախատեսվել է 31,508,845.8 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 50,318,151.1 հազ. դրամ: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության փաստացի ծախսերը կազմում են 50,742,590.97 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 161.0%-ը, ճշտված ծրագրի՝ 100.8 %-ը:

2009 թվականին գերատեսչություններից ճշտված ծրագրի նկատմամբ ամենացածր կատարողական է արձանագրվել «ՀՀ կառավարության աշխատակազմ» գերատեսչությունում, այսպես՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 24,727,901.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով 25,682,670.5 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 14,142,181.8 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 55.1%-ը: Թերակատարումը հիմնականում պայմանավորված է «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված, սակայն ոչ լրիվ կատարված ծախսերով:

Ըստ Հաշվետվության, 2009 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ծախսերը կազմել են 15,463,586.6 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 77.5%:

2009 թվականին բյուջետային տարում կնքված պայմանագրերով պետական կարիքների համար նախատեսվել է իրականացնել 369,409,712.2 հազ. դրամի գումարներ

(առանց արտաքին վարկերի և դրամաշնորհների ծրագրերի գնումների), սակայն փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 358,003,773.4 հազ. դրամ:

Վերահսկիչ պալատի կարծիքով, Հաշվետվությունը պետք է պարունակի գնումների գործընթացի վերաբերյալ համապատասխան տվյալներ՝ ըստ գործարքների, որը հնարավորություն կտա գնահատել Հայաստանի Հանրապետությունում պետական կարիքների համար իրականացվող գնումների արդյունավետությունը:

### **2009 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ**

2009 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ֆինանսավորումը կազմել է 239,113,511.8 հազ. դրամ: 2008 թվականի համեմատ, 2009 թվականին պակասուրդի մեծությունը աճել է 9.7 անգամ, որը հիմնականում պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրների մեծության 21.1 անգամ աճի արդյունք է:

2009 թվականի պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 40,049,175.0 հազ. դրամով: 2009 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պակասուրդի ֆինանսավորման մեծությունը ավելացրել է 26,530,852.3 հազ. դրամով և ճշտված ծրագիրը կազմել է 66,580,027.3 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 597.1%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 359.1 %:

2009 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները Օրենքով նախատեսվել են 30,537,541.5 հազ. դրամ, տարվա ընթացքում կատարվել են փոփոխություններ, և ներքին աղբյուրներից ֆինանսավորման գումարը պակասեցվել է 294,736,170.3 հազ. դրամով, որի արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ճշտված ծրագիրը կազմել է 264,198,628.8 հազ. դրամ բացասական ֆինանսավորմամբ: Փաստացի այս ցուցանիշը կազմել է 115,148,415.5 հազ. դրամ բացասական ֆինանսավորմամբ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ -377.1%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 43.6%:

Համաձայն Հաշվետվության 2009 թվականի ընթացքում պետական բյուջետային միջոցների ազատ մնացորդի փոփոխությունը կազմել է (4,689.0) մլն դրամ, այդ թվում՝ (61,798.0) մլն դրամ՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն,

*որից՝*

61,652.5 մլն դրամ՝ ԿԳ-ում դեպոզիտի փոփոխություն,

3,306.3 մլն դրամ՝ տեղական բյուջեի փոփոխություն,

(1,667.9) մլն դրամ՝ արտաբյուջեի փոփոխություն,

(753.0) մլն դրամ՝ մոնետիզացման հաշիվների փոփոխություն,

(124,335.8) մլն դրամ՝ պետական բյուջեի միջոցների փոփոխություն,

130,000.0 մլն դրամ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում,

5,664.2 մլն դրամ՝ պետական ընդհանուր ռեսուրսների (ներառյալ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում) փոփոխություն, այդ թվում՝ (1,385.8) մլն դրամ՝ միջանկյալ հաշվի փոփոխություն,

(2,323.7) մլն դրամ՝ 2009 թվականի տարեսկզբի ազատ մնացորդ,

1,458.8 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մնացորդի փոփոխություն,

1,360.1 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի տարբերություն,

(84.6) մլն դրամ՝ ԱԶԲ-ի և ՀԲ-ի կողմից տրամադրված որոշ վարկային միջոցների սպասարկման գծով ձևավորված տոկոսավճարներ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ պետական բյուջետային միջոցների 2009 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 80,534.9 մլն դրամ:

2009 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրի փաստացի ֆինանսավորման կատարողականն ունի հետևյալ պատկերը.

- 2009 թվականին պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրներում՝ արտաքին վարկերի ստացման փաստացի ընդհանուր գումարը ՀՀ դրամով արտահայտված՝ 395,680,948.9 հազ. դրամ է, որը Օրենքով նախատեսվածից ավելի է 8 անգամ, այսինքն՝ ներգրավվել է Օրենքով նախատեսվածից 346,470,175.7 հազ. դրամով ավելի, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը կազմել է 106.3%, այսինքն՝ ներգրավվել է ճշտված ծրագրով նախատեսվածից 23,543,258.3 հազ. դրամով ավելի:
- Միջազգային կազմակերպությունների կողմից փաստացի տրամադրվել է 170,910,062.9 հազ. դրամ, որը կազմում է Օրենքով նախատեսվածի 578.7%-ը կամ 5.8 անգամ ավելի, քան նախատեսվել է: Շեղումը կազմել է 141,382,511.7 հազ. դրամ:
- Օտարերկրյա պետությունների կողմից փաստացի տրամադրվել է՝ 224,770,885.99 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 1,141.9%-ը: Շեղումը կազմել է 205,087,664.0 հազ. դրամ:
- Օրենքով նախատեսված 29 վարկային ծրագրերից մեկով՝ «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր»՝ 258,513.1 հազ. դրամ նախատեսված ընդհանուր գումարով փաստացի չի ստացվել:
- Օրենքով չնախատեսված 12 վարկային ծրագրով միջազգային համաձայնագրերի շրջանակներում ստացվել է 325,509,713.9 հազ. դրամ: ՀՀ կառավարության կողմից 2009 թվականին Օրենքով չնախատեսված արտաքին վարկերը կազմել են փաստացի

ստացվածի 82.3%-ը: Այդ վարկային ծրագրերն են՝ 1.«Ռոռոգման համակարգի վերականգնման հրատապ ծրագիր» - 3,232,401.5 հազ. դրամ, 2. «Կենսական նշանակության ճանապարհների վերականգնման երկրորդ ծրագիր» - 6,120,394.7 հազ. դրամ, 3. «Սոցիալական ներդրումների հիմնադրամ III ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» - 2,170,050.6 հազ. դրամ, 4. «Կենսական նշանակության ճանապարհների վերականգնման ծրագիր» - 9,400,790.6 հազ. դրամ, 5. «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» - 1,346,817.2 հազ. դրամ, 6.«Գյուղ. ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտ. զարգացման ծրագրի (լրացուցիչ ֆինանսավորում)» - 722,753.9 հազ. դրամ, 7.«Զարգացման քաղաքականության գործողությունների վարկ» - 24,826,407.0 հազ. դրամ, 8. «Շուկայական հնարավորություններ ֆերմերներին (OPEC)» - 3,774,803.2 հազ. դրամ, 9. «Ճգնաժամին հակազդելու աջակցության ծրագիր» - 31,380,620.7 հազ. դրամ, 10. «Stand-by» - 57,380,587.4 հազ. դրամ, 11. «Զրային սեկտորի զարգացման ծրագիր II (համայնքային ենթակառուցվածք-Արմավիր)» - 69,087.3 հազ. դրամ, 12. «500 մլն ԱՄՆ դոլար Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական վարկ»- 185,085,000.0 հազ. դրամ:

2009 թվականին Օրենքով 29 վարկային ծրագրի գծով նախատեսվել է մարել 6,626,819.5 հազ. դրամ և փաստացի մարվել է 6,349,396.4 հազ. դրամ: Մեկ վարկային ծրագրի՝ «Լինսի հիմնադրամի վարկային ծրագիր» գծով մարումը Օրենքով չի նախատեսվել, բայց փաստացի մարվել է 2,100.0 հազ. դրամի չափով:

«Հայաստանի Հանրապետության 2008 և 2009 թվականների պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին եզրակացությունում ՀՀ վերահսկիչ պալատը արձանագրել է, որ հաշվետվությունում արտաքին վարկերի օգտագործումն ու ստացումը հաշվարկվել է արտաքին վարկերի օգտագործման ու ստացման օրվա՝ տվյալ արտաքին վարկերի համապատասխան արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքով, իսկ սպասարկումը և մարումը՝ ֆիքսված փոխարժեքով: Հաշվետվությունում պատկերը նույնն է:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվելուց հետո էլ 2009 թվականի ընթացքում միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չի կատարվել: Սակայն ՀՀ կառավարությունը 2010 թվականի մարտի 25-ին ընդունել է թիվ 324՝ «Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի միջոցով օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառման կարգը հաստատելու մասին»

որոշումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառումը պետք է կատարվի գանձապետական միասնական հաշվով: Մեր կարծիքով, ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության նպատակով անհրաժեշտ է, որ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Մասնավորապես՝ ՊՈԱԿ-ներին, ԲԸ-ին, Հիմնադրամներին, ինչպես նաև ««Գերմանահայկական հինադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով:

### 2009 թվականի ՀՀ պետական պարտքը

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3,362.7 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2,966.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 396.0 մլն ԱՄՆ դոլար: 2009 թվականին ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 88.2%, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 11.8%, այսինքն՝ 2008 թվականի համեմատ, 2009 թվականին աճել է ՀՀ արտաքին պետական պարտքի տեսակարար կշիռը 5.5 տոկոսային կետով:

Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի «Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) 60%-ը»: 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2008 թվականի ՀՆԱ-ի 28.2%-ը, այսինքն՝ պահպանվել է օրենքի այդ կետի պահանջը:

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2,966.7 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 2,465.9 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության պարտավորությունն է, իսկ 500.8 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ)՝ պարտավորությունը: 2009 թվականին ՀՀ արտաքին պարտքը, 2008 թվականի համեմատ, աճել է մոտ 1.9 անգամ: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսման (նոր արտաքին վարկեր չներգրավելու դեպքում) ՀՀ արտաքին պարտքը պիկին կհասնի 2013 թվականին՝ 4,089.0 մլն ԱՄՆ դոլար, որից հետո կնվազի:

2009 թվականի ՀՀ արտաքին պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 34% է, այսինքն՝ այս ցուցանիշով չի գերազանցել 50%-ի սահմանը, երեք ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր,

մեկ ցուցանիշով միջին պարտքի բեռ ունեցող երկիր է և մեկ ցուցանիշի արդյունքով այն դասակարգվել է ծանր պարտքի բեռ ունեցող երկրների խմբում (Աղյուսակ 1):

### Աղյուսակ 1

**Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները**

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի	Փաստացի ցուցանիշներ								
		2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
ԶՆԱ/ՀՆԱ	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 80% և ավելի									
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%									
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ մինչև 48%	27.7%	28.3%	25.9%	20.6%	14.3%	11.0%	9.0%	8.3%	25.9%
ԶՆԱ/ Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 220% և ավելի									
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%-220%									172.6%
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ մինչև 132%	108.8%	96.5%	80.6%	68.6%	49.6%	46.4%	46.9%	56.6%	
Արտաքին պարտքի սպասարկում /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 25.9%									
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 23.45%	9.6%	9.8%	15.6%	8.9%					
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 7.8%					4.4%	3.9%	2.9%	3.1%	5.5%
Տոկոսավճար /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 11.65%									
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 9.85%									
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 3.6%	3.4%	2.9%	1.3%	0.9%	0.8%	0.7%	0.6%	0.7%	2.1%
Արտաքին պարտք/Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 387.95%									226.6%
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 209.00%	167.8%	147.0%	121.5%	110.5%	77.6%	79.8%	81.6%	89.8%	
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 64.00%									
Արտաքին պարտք/ՀՆԱ	Սահման 50.00%	42.7%	43.2%	39.1%	33.1%	22.4%	18.9%	15.7%	13.2%	34.0%
ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում /Պետբյուջեի եկամուտներ		15.6%	17.1%	27.9%	16.9%	7.6%	5.5%	2.6%	2.1%	3.8%

Համաձայն 2008 թվականի նկատմամբ 2009 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի փոփոխության գործոնային վերլուծության արդյունքների հաշվետու տարում



տրամադրված արտաքին վարկերի արտարժույթի և ԱՄՆ դոլարի փոփոխության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է 19.6 մլն ԱՄՆ դոլար կամ 1.4%, իսկ տրամադրված արտաքին վարկի ստացման և մարման գումարների տարբերության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է 1,370.0 մլն ԱՄՆ դոլար կամ 98.6%:

2009 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները (մասհանումներ) կազմել է 1,395.8 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ՀՀ կառավարությունը ստացել է 1,064.7 մլն ԱՄՆ դոլար (395,680.9 մլն ՀՀ դրամ), իսկ ԿԲ-ն՝ 331.1 մլն ԱՄՆ դոլար: 2009 թվականի ընթացքում ներգրավված արտաքին վարկերի 72.8%-ը կամ 1,016.7 մլն ԱՄՆ դոլարը ոչ արտոնյալ վարկերն են:

ՀՀ կառավարության ստացած 1,064.7 մլն ԱՄՆ դոլար (395,680.9 մլն ՀՀ դրամ) արտաքին վարկերի, որից՝

- 303.9 մլն ԱՄՆ դոլարը (113,587.6 մլն ՀՀ դրամ) կամ 28.5%-ը երեք միջազգային կազմակերպությունների (IMF, ADB, IDA) կողմից դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող գումարն է:
- 500.0 մլն ԱՄՆ դոլարը (185,085.0 մլն ՀՀ դրամ) կամ 47.0%-ը Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրվածն է, որի օգտագործման ուղղությունները ՀՀ կառավարությունն է որոշում: 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՌԴ-ի կողմից տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) վարկից 59.8 մլն ԱՄՆ դոլարը (22,150.0 մլն ՀՀ դրամը) բաշխված չէ և գտնվում է ՀՀ ֆինանսների նախարարության կայունացման դեպոզիտային հաշվում:
- 260.9 մլն ԱՄՆ դոլարը (97,008.3 մլն ՀՀ դրամ) կամ 24.5%-ը ստացվել է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպություններից ու օտարերկրյա պետություններից, տնտեսության առաջնային ոլորտների զարգացման ներդրումային ծրագրերի ֆինանսավորման նպատակով, ըստ ծրագրերի և վարկատուների:

2009 թվականին Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի մարման և սպասարկան ծախսը կազմել է 72.0 մլն ԱՄՆ դոլար (27.4 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ և 44.7 մլն ԱՄՆ դոլար մարում), որից՝ ՀՀ կառավարության ներգրավված արտաքին վարկերի մարման և սպասարկման ծախսը կազմել է 44.9 մլն ԱՄՆ դոլար ((13,804.7 մլն ՀՀ դրամ) 24.1 մլն ԱՄՆ դոլարը (7,455.2 մլն ՀՀ դրամ) տոկոսավճարներ և 20.9 մլն ԱՄՆ դոլարը (6,349.4 մլն ՀՀ դրամ)՝ մարում), իսկ ԿԲ-ինը՝ 27.1 մլն ԱՄՆ դոլար (3.3 մլն ԱՄՆ դոլարը տոկոսավճարներ և 23.8 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում):

2009 թվականին վճարված 24.1 մլն ԱՄՆ դոլար (7,455.2 մլն ՀՀ դրամ) ՀՀ կառավարության ներգրավված արտաքին վարկերի տոկոսավճարներից 10.8 մլն ԱՄՆ դոլարը

(3,284.5 մլն ՀՀ դրամ) կամ 44.1%-ը ՌԴ-ի կողմից տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) վարկի վեց ամսվա համար տրված տոկոսավճարներն են:

2009 թվականին Հայաստանի Հանրապետություն ներգրավված արտաքին վարկերի 72.8%-ը կամ 1,016.7 մլն ԱՄՆ դոլարի վարկերը ոչ արտոնյալ վարկերն են, բացի այդ, նախատեսված է, որ 2010 թվականին գործող վարկերի գծով ներգրավվելու է ևս 377.1 մլն ԱՄՆ դոլարի ոչ արտոնյալ վարկեր, դա նշանակում է, որ վարկերի «մայր» գումարները պետք է մարվեն ներգրավումից 3-4 տարի հետո կարճ ժամկետում (5-10 տարի), այսինքն՝ մարման և սպասարկման ծախսը կունենան աճման շեշտված տեմպեր:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ՝

1. Արտաքին վարկերի մարման և սպասարկման ծախսը երեք տարվա ընթացքում մեծանում է մի քանի անգամ: Այսպես, 2013 թվականին ՀՀ արտաքին վարկերի մարման և տոկոսավճարները իրականացնելու համար անհրաժեշտ կլինի 496.1 մլն ԱՄՆ դոլար, կամ 6.9 անգամ ավելի, քան 2009 թվականին, որից՝ ՀՀ կառավարությանը արտաքին վարկերի մարման և տոկոսավճարները իրականացնելու համար 2013 թվականին անհրաժեշտ կլինի 278.1 մլն ԱՄՆ դոլար, կամ 6.2 անգամ ավելի, քան 2009 թվականին:

2. Արտաքին վարկի մարման և սպասարկման ծախսի աճը հիմնականում պայմանավորված է նախ՝ Արժույթի Միջազգային Հիմնադրամի և ՌԴ-ի կողմից տրամադրված վարկերի ներգրավմամբ և այդ վարկերի նկատմամբ պարտավորությունը կազմել է 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի 36.6%-ը, իսկ դրանց մարումը և սպասարկումը՝ ՀՀ արտաքին պարտքի մարման և սպասարկման գումարի 54.2%-ը: Պատկերը փոխվում է 2012 թվականից, երբ պետք է սկսվի վարկերի մարման գործընթացը: Այսպես՝ 2012 թվականին Արժույթի Միջազգային Հիմնադրամի և ՌԴ-ի կողմից տրամադրված վարկերի պարտքը ՀՀ արտաքին պարտքում կկազմի 31.4%, դրանց մարումն ու սպասարկումը ՀՀ արտաքին պարտքի մարման և սպասարկման գումարի 75.8%-ը, 2013 թվականին՝ ՀՀ արտաքին պարտքի 21.9%-ը, իսկ դրա մարումն ու սպասարկումը ՀՀ արտաքին պարտքի մարման ու սպասարկման գումարի 82.1%-ը:

Մեր կարծիքով, եթե տնտեսական աճը և հարկային եկամուտների հավաքագրման ծավալները մնան 2009 թվականի մակարդակին, ապա վտանգ կա, որ Հայաստանի Հանրապետությունը կարող է լուրջ խնդիրներ ունենալ նախկինում վերցրած պարտավորությունների մարման և դրանց սպասարկման (տոկոսավճարներ) իրականացման գործում, այսինքն՝ կառաջանա պարտքային ճգնաժամ: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ: Դրանք են՝

1. ՀՀ պետական պարտքի ծավալների, ինչպես նաև դրանց սպասարկմանն ուղղվող ռեսուրսների գումարների աճով պայմանավորված՝ ներկայումս պետք է ՀՀ պետական

պարտքում ներքին պարտքի տեսակարար կշիռը մեծացվի, քանի որ վերջինիս ռիսկայնությունը ցածր է, այսինքն՝ բացակայում է արտարժութային գործոնը:

2. Ոչ արտոնյալ վարկերի մարման ժամկետը երկարաձգել, որպեսզի ստեղծվի տնտեսական աճի հետագա հնարավորություն, որով հնարավոր կլինի լուծել պարտավորության կատարման խնդիրը:

3. Տվյալ բյուջետային տարում առաջացած լրացուցիչ եկամուտների և տնտեսման հաշվին մինչ մարման ժամկետը, մարել ոչ արտոնյալ վարկերը, մասնավորապես՝ ՌԴ-ի կողմից տրամադրված վարկը:

Ելնելով վերոնշյալից, Վերահսկիչ պալատը գտնում է.

ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: